ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լրամշակված նախագիծ
Կ-762-15.01.2024-ԱոՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» 2002 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-324 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) ~~1-ին մասի 4-րդ~~ ~~կետից~~ 5-րդ պարբերությունից հանել «: Ուղեղի մահը համարժեք է մարդու մահվան» բառերը.

2) ~~1-ին մասի 6-րդ~~ ~~կետը~~ 7-րդ պարբերությունը «մահվան փաստի հաստատումից հետո» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ կենսաբանական մահից հետո» բառերով.

3) ~~1-ին մասի 8-րդ կետում~~ 9-րդ պարբերությունում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ ~~1-ին մասը 8-րդ~~ ~~կետից~~ 9-րդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր ~~կետով~~ պարբերությունով.

«կենսաբանական մահ՝ օրգանիզմի բոլոր հյուսվածքներում եւ բջիջներում կենսաբանական եւ ֆիզիոլոգիական գործունեության լրիվ եւ անդառնալի դադարում:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին ~~մասում~~ պարբերությունում «Փոխպատվաստման ենթակա» բառերը փոխարինել «Կենդանի դոնորից վերցվող փոխպատվաստման ենթակա» բառերով.

2) 2-րդ ~~մասից~~ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր ~~մասով~~ պարբերությունով.

«Մարդու ուղեղային կամ կենսաբանական մահվան փաստը հաստատելուց հետո փոխպատվաստման նպատակով վերցվող օրգանների կամ հյուսվածքների ցանկերը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ ~~մասն~~ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին ~~մասում~~ պարբերությունում «հրաժարվել է» բառերը փոխարինել «ներկայացրել է իր անհամաձայնությունը՝» բառերով.

2) 2-րդ ~~մասում~~ պարբերությունում «որոշման բացակայության դեպքում» բառերը փոխարինել «գրավոր անհամաձայնության բացակայության դեպքում» բառերով.

3) 4-րդ պարբերությունը «փաստաթղթերում» բառից հետո լրացնել «և մուտքագրվում էլեկտրոնային առողջապահական համակարգ» բառերով.

4) 5-րդ ~~մասում~~ պարբերությունում «որոշման» բառը փոխարինել «գրավոր անհամաձայնության» բառերով.

5) 7-րդ ~~մասը~~ պարբերությունը «այլ հարցերի շուրջ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ որպես դիակային դոնոր հանդես գալու անհամաձայնության իրավունքի, դիակային դոնորի ընտանիքի անդամների համաձայնություն տալու իրավունքի վերաբերյալ» բառերը:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածում «մարդու ուղեղային» բառերից հետո լրացնել «կամ կենսաբանական» բառերը:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) «քաղաքացի» բառերն իրենց հոլովաձեւերով փոխարինել «անձ» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձեւերով.

2) 1-ին ~~մասի~~ պարբերության «բ» եւ «զ» կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 1-ին ~~մասը~~ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «է» կետով.

«է) անձը օրենքով սահմանված կարգով ճանաչված է անգործունակ:»:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին ~~մասի~~ պարբերության «բ» կետում «վիրահատությունը» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով եւ 1-ին ~~մասը~~ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր «գ» կետով.

«գ) օրգանը կամ հյուսվածքը վերցնելուց հետո լիազոր մարմնի սահմանած կարգով գտնվել շարունակական (դիսպանսերային) հսկողության մեջ:»:

Հոդված 8. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում: